ՏԵՂԵԿԱՆՔ

«Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխվող հոդվածների վերաբերյալ

«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ

Հոդված 18. Համագործակցությունը Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների հետ

Ազգային անվտանգության մարմինները կարող են համագործակցել պետական մարմինների և կազմակերպությունների հետ:

Ազգային անվտանգության մարմիններն իրավապահ մարմինների հետ համագործակցում են հանցագործությունների բացահայտման և կանխման ու այլ հարցերի լուծման նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ և քննչական գործողություններ իրականացնելիս, որոնք սահմանվում են օրենքով:

Ազգային անվտանգության մարզային մարմիններն իրենց օպերատիվ-հետախուզական գործունեության մեջ անկախ են պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններից ու դրանց պաշտոնատար անձանցից:

Ազգային անվտանգության մարմինները Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով կարող են օգտագործել Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման այլ ուժերի հնարավորությունները:

Պետական մարմինները և կազմակերպությունները պարտավոր են աջակցել ազգային անվտանգության մարմիններին դրանց կողմից իրենց վրա դրված պարտականությունները կատարելիս:

Հայաստանի Հանրապետությունում փոստային կապի, էլեկտրոնային կապի, այդ թվում՝ հեռակոդային, գաղտնի, արբանյակային կապի համակարգերի ծառայություններ մատուցող կազմակերպությունները և քաղաքացիները պարտավոր են ազգային անվտանգության մարմինների պահանջով ապարատային միջոցների կազմում ընդգրկել լրացուցիչ սարքավորումներ և ծրագրային միջոցներ, ինչպես նաև անհրաժեշտ պայմաններ ստեղծել ազգային անվտանգության մարմինների կողմից օպերատիվ-տեխնիկական միջոցառումներ անցկացնելու համար:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խնդիրների լուծման նպատակով ազգային անվտանգության մարմինների սպայական անձնակազմը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող է գործուղվել պետական մարմիններ և կազմակերպություններ՝ նրանց թողնելով զինվորական ծառայության մեջ: Նշված սպաներին կենսաթոշակ նշանակվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործուղվող սպաները կենսաթոշակի ընտրության և ստանալու իրավունք ունեն՝ ըստ մինչև գործուղվելը կամ գործուղվելուց հետո զբաղեցրած պաշտոնի:

Օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների, իրավապահ մարմինների և կազմակերպությունների հետ ազգային անվտանգության մարմինների

համագործակցությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, ոլորտային համագործակցությունը կանոնակարգող փաստաթղթերի, իսկ բացառիկ դեպքերում՝ փոխադարձության հիման վրա:

(18-րդ հոդվածը փոփ., լրաց. 23.03.18 ՀՕ-268-Ն)

Հոդված 18[1] Փաստաբանական հարցումներին պատասխանելը

1. Ազգային անվտանգության մարմինը պարտավոր է սույն հոդվածով նախատեսված կարգով և ժամկետում պատասխանել փաստաբանի կողմից ներկայացված հարցմանը (փաստաբանական հարցմանը), եթե հարցման մեջ փաստաբանը նշել է այն վստահորդի անունը, ազգանունը (անվանումը), որին իրավաբանական օգնություն ցույց տալու անհրաժեշտությունից ելնելով է հարցումը կատարել: Հարցմանը կցվում է նաև փաստաբանի արտոնագրի պատճենը: Այլ փաստաթղթեր և տեղեկություններ փաստաբանից չեն կարող պահանջվել:

2. Ազգային անվտանգության մարմինը պարտավոր է սույն հոդվածի 1-ին մասում նշված փաստաբանական հարցումը ստանալու պահից տասնօրյա ժամկետում հարցում կատարող փաստաբանին տրամադրել Հայաստանի Հանրապետության սահմանով քաղաքացու մուտքի և ելքի մասին տեղեկությունը, ինչպես նաև պահանջվող այլ տեղեկություններ (փաստաթղթեր), եթե դրանք վերաբերում են ազգային անվտանգության մարմնի իրավասությանը և չեն պարունակում օրենքով պահպանվող գաղտնիք:

3. Ազգային անվտանգության մարմնի կողմից փաստաբանական հարցմանը մերժելու հիմք չի կարող լինել փաստաբանի կամ նրա վստահորդի տեղեկատվության հայցման շահագրգիռ անձ չլինելը:

4. Փաստաբանն իրավունք ունի սույն հոդվածով նախատեսված տեղեկություններն օգտագործել միայն հարցման մեջ նշված վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով: